ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.

Միջազգային դիվանագիտությունում և մամուլում արդեն 19 տարի է, որ այս կամ այն չափով արծարծվում է Արցախի հիմնախնդրի միջազգայնացման հարցը: Արցախի հարցը միջազգայնացվել է 1992 թվականին՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարի հինգերորդ տարում: Այդ շրջանում անկախանալու հարց է բարձրացվել նաև Հարավային Օսեթիայում, Աբխազիայում, Կոսովոյում և այլ տեղերում: Հարց է առաջանում. ինչո՞ւ այդ բոլորից միջազգայնացվել է միայն Արցախի հարցը, որը մինչև հիմա մնում է չլուծված: Դրանում ովքե՞ր էին շահագրգռված և ի՞նչ նպատակ էին հետապնդում: Սրանք հարցեր են, որոնք խիստ մտահոգիչ են, և պարզաբանելու անհրաժեշտություն կա:

Ակնհայտ է, որ 23 տարի առաջ՝ 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի XX գումարման IV արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց հարց բարձրացնել մարզը դուրս բերել Խորհրդային Ադրբեջանի կազմից (Կովբյուրոյի ապօրինի որոշումով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին էր հանձնվել 1921 թվականին) և վերամիավորել Խորհրդային Հայաստանին: Այնուհետև սկսվեց պայքարի և հերոսացման մի շրջան, որը խլեց հազարավոր զոհեր և պատճառեց նյութական մեծ վնասներ: Ամենաահավորը բռնագաղթն էր. ավելի քան 500 հազար հայեր, հեռանալով իրենց օջախներից, ցրվեցին աշխարհով մեկ և դարձան գաղթականներ:

1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի համաձայն՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի XX գումարման XI նստաշրջանը Շահումյանի շրջանային խորհրդի պատգամավորների մասնակցությամբ որոշում ընդունեց մարզը հռչակել հանրապետություն[1]: Նույն թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցավ հանրաքվե՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու վերաբերյալ, իսկ հոկտեմբերի 16-ին տեղի ունեցան հանրապետու-թյան նախագահի ընտրություններ: Այդ ժամանակահատվածում կրքերը հետզհետե բորբոքվում էին Ադրբեջանի և Հայաստանի միջև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ:

ԽՍՀՄ-ը իր վերջին օրերն էր ապրում: Արցախի Հանրապետությունից դուրս էին բերվում խորհրդային ուժերը: Երկրամասը մեն-մենակ մնաց Ադրբեջանի դեմ: 1991 թ. սեպտեմբերից չէին դադարում հրետակոծությունները, իսկ դեկտեմբերի վերջից Ադրբեջանը բացահայտ պատերազմ սկսեց Լեռնային Ղա-

---

[1] Տե՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992 թ. հունվար): Փաստաթղթեր: Ե., 2011:

բաբաղի Հանրապետության դեմ: Երիտասարդ հանրապետությունը կրակի և բոցերի մեջ էր: Հայ ազատամարտիկները հերոսաբար դիմակայում էին թուրքերի բարբարոսություններին:

Արցախի Հանրապետության հռչակման և Հայաստանում անկախության հանրաքվեի անցկացման օրերին Ադրբեջան–Լեռնային Ղարաբաղ–Հայաստան ժամանեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահները, որոնց մասնակցությամբ 1991 թ. սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում կայացած բանակցություններում Հայաստանի և Ադրբեջանի միջև հուշագիր ստորագրվեց, որտեղ առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց հակամարտությունը փուլ առ փուլ կարգավորելու հարցը. ըստ որում նախ հակամարտության գոտում առկա խնդիրները միջնորդների օգնությամբ կարգավորել, ապա սկսել բանակցային գործընթացը: Այդ ժամանակ ԼՂՀ ղեկավարությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ այդ փաստաթուղթը չի կարող լիարժեք համարվել, քանի որ ԼՂՀ պատվիրակության ստորագրությունը բացակայում է: Նույն թվականի դեկտեմբերի 11-ին Բելառուսի Բելովեժյան թավուտում Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի նախագահների միջև ստորագրվեց Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կազմավորման վերաբերյալ հռչակագիրը: Դրանից հետո Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը տեղափոխվեց որակապես միջազգային այլ մակարդակ[2]:

Դա միանգամայն տրամաբանական է, որովհետև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը մինչև այդ կարող էր լուծվել խորհրդային Սահմանադրության և խորհրդային օրենքների հիման վրա: Դրա համար հարմար առիթ էր 1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստը, որտեղ քննարկվեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Սակայն դա չարվեց: Հետագայում՝ 2006 թ., Մ. Գորբաչովը «Մոսկովսկի կոմսոմոլեց» հրատարակությանը տված հարցազրույցում նշել է. «Իմ տեսակետից՝ Ադրբեջանի կազմից Լեռնային Ղարաբաղի դուրս գալու հարցը մեծապես արդարացված էր, և որ դա հնարավոր կլիներ միայն ԽՍՀՄ-ի շրջանակներում»[3]:

ԼՂՀ տարածքից ԽՍՀՄ զորքերի դուրսբերումը մեծ տագնապ առաջ բերեց Արցախի Հանրապետության բնակչության շրջանում: ԼՂՀ գործկոմը, դիմելով Անկախ Պետությունների Համագործակցության ղեկավարներին, խնդրել էր միջոցներ ձեռնարկել հանրապետության բնակչության պաշտպանությունն ապահովելու համար: Սակայն ԱՊՀ-ն ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց: Մինչդեռ Արցախում օր օրի ավելանում էր զոհերի թիվը: Մարտունու շրջանի Ավդուռ գյուղում ռմբակոծություններից զոհվել էին 6-14 տարեկան հինգ երեխաներ: ԼՂՀ գործկոմը դեկտեմբերի 30-ին հեռագրեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Եվրախորհրդի ղեկավարներին, ԱՊՀ զորքերի գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Ե. Ի. Շապոշնիկովին, որում մասնավորապես ասված էր, որ

---

[2] Ազդակ (Բեյրութ), 28.II.1998, Բացառիկ, էջ 99:

[3] Հայաստանի Հանրապետություն, 4.III.2006:

ԼՂՀ-ում ցեղասպանություն է իրագործվում՝ մարտական բանակային թնդանոթների կիրառմամբ: Նոր տարվա նախօրեին շուրջօրյա հոծախումբ հրետակոծման հետևանքով ավերվեցին տասնյակ հայկական բնակավայրեր, սպանվեցին և վիրավորվեցին հարյուրավոր խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, ծերունիներ: Ամանորի գիշերը հակառակորդը, հարձակում գործելով Ասկերանի շրջանի վրա, ներխուժեց Խրամորթի ծայրամասերը, որի հետևանքով զոհվեցին 7 հայ բնակիչներ՝ 6 ծերունի և մեկ երեխա: Այդ օրերին Շահումյանի շրջանում շարունակվում էին ընդհարումները: Հակառակորդը, օգտագործելով ծանր տեխնիկա, կանգ չի առնում ոչ մի դաժանության առաջ: Հունվարի 1-2-ը անընդհատ ռմբակոծման է ենթարկվել Ստեփանակերտը: Ռմբակոծությունները շարունակվում էին հանրապետության բոլոր շրջաններում: Հակառակորդը հետագայում, մինչև Շուշիի ազատագրումը, իր «բնաջնջողական պատերազմի» քաղաքականությամբ հետզհետե ուժեղացնում էր ճնշումը: 1991 թ. նոյեմբերից մինչև 1992 թ. մայիսի սկիզբը ադրբեջանական կրակակետերից միայն Ստեփանակերտի վրա արձակվել է 4741 արկ, որից մոտ երեք հազարը՝ «գրադ» կայանքից: Այդ հրետակոծությունների հետևանքով զոհվել են 111 և վիրավորվել 332 բնակիչներ՝ մեծ մասը կանայք, երեխաներ և ծերեր: Ավերվել է 370 բնակելի տուն և շինություն[4]:

1992 թ. հունվարից սկսած՝ Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում խոսվում էր ԼՂՀ հիմնախնդրի լուծման գործում մասնակցություն ունենալու առաջարկի մասին[5]: Այսպես, Ֆրանսիայում պատգամավորները կոչ էին անում աջակցել Ղարաբաղի հայությանը: Ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ, դիմելով արտաքին գործերի նախարար Ռոլան Դյումային, պաշտոնական Փարիզին կոչ էին անում աջակցություն հայտնել «ծայրահեղ ծանր վիճակում» հայտնված Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը, ինչպես նաև ընթացք տալ տարածքային բոլոր հարցերի և ազգային ինքնիշխանությանն առնչվող հիմնահարցերի խաղաղ կարգավորմանը: Այնուհետև ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը 1992 թ. ապրիլին երկու անգամ զանգահարել է Լ. Տեր-Պետրոսյանին և հայտնել, որ ԱՄՆ-ն պաշտպանում է ղարաբաղցիների պահանջը: Այդ ընթացքում պետքարտուղար Բեյքերը, լինելով Բաքվում, դատապարտել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումն Ադրբեջանի կողմից[6]:

1992 թ. հունվարին խոսվում էր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը միջազգայնացնելու վերաբերյալ: Այդ ժամանակ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը Թուրքիա այցելելուց հետո հանդես եկավ ընդդեմ ԼՂ հիմնահարցի միջազգայնացմանը՝ այն հայտարարելով Ադրբեջանի ներքին գործ:

---

[4] **Աբրահամյան Հ.,** *Մարտնչող Արցախը, գ. Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 348-349:*

[5] *Ազդակ, էջ 100:*

[6] **Աբրահամյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 347:*

Հունվարի վերջին Հայաստանը և Ադրբեջանը դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ, հետո խորհուրդը՝ կոմիտե) անդամ. Ղարաբաղի հարցը, ըստ էության, դուրս եկավ Երևանի և Բաքվի ներքին գործ լինելու շրջանակից: Այդ ժամանակ էլ ԱՄՆ-ի սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Կլեյբորն Փելը նամակ հղեց նախագահ Ջորջ Բուշին, որում իր անհանգստությունն էր հայտնում ԼՂ-ում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ և նախագահին կոչ արեց միջամտել Ղարաբաղի հիմնահարցի լուծմանը: Պարոն Փելը նաև կոչ էր անում Բուշին միջնորդել, որ Ռուսաստանի նախագահը և նրա գործընկերները շարունակեն իրենց առաքելությունը Արցախի հիմնախնդրի վերաբերյալ: 1992 թ. այդ օրերին Ղարաբաղի իրադարձություններին անդրադարձել են նաև Եվրոպական երկրների անվտանգության խորհրդի նախագահ Ստենի Հոետը և նախագահի տեղակալ Դենիս դե Կոնսինին, որոնք նամակներ են հղել Միացյալ Նահանգների պետական քարտուղար Ջեյմս Բեյքերին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին և Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին: Նրանք իրենց անհանգստությունն են արտահայտում Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ և խնդրում են արդյունավետ միջոցներ ձեռնարկել Ղարաբաղում իրադրությունը կարգավորելու համար:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը 1992 թ. հունվարի վերջին մասնակցում էր այդ օրերին Պրահայում տեղի ունեցող Հելսինկյան գործընթացի մասնակից երկրների արտգործնախարարների խորհրդի նիստին: Հանդիպելով լրագրողներին՝ նշում է, որ Լեռնային Ղարաբաղը չպետք է պատկանի ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին. դա է նրա անկախության առավել հավաստի ուղին: ՀՀ ԱԳ նախարարը այն կարծիքին էր, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրն ընկած է մարդու իրավունքների և քաղաքացիների ինքնորոշման իրավունքների հարթության վրա: Նա ի լուր աշխարհի հայտարարում է, թե Հայաստանի կառավարությունը պաշտպանում է Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը միտված յուրաքանչյուր խաղաղասիրական նախաձեռնություն, այդ թվում՝ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր կամ Եվրոպայի անվտանգության և համագործակցության դիտորդների խումբ Լեռնային Ղարաբաղ ուղարկելը: Դա թերևս կլիներ ճիշտ քայլ, և երկրամասը կփրկվեր Ադրբեջանի հետագա վայրագություններից: Սակայն վերջինս Թուրքիայի համաձայնությամբ դեմ գնաց այդ առաջարկությանը և խափանեց ծրագիրը: Մինչդեռ Հայաստանը լիովին պաշտպանում էր Լեռնային Ղարաբաղ խաղաղարար ուժեր մտցնելու առաջարկությունը: 1992 թ. փետրվարի սկզբին Շվեյցարիայի Դավոս քաղաքում միջազգային տնտեսական խորհրդակցության ժամանակ Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը կոչ արեց ստեղծել ԱՊՀ անդամ երկրների խաղաղարար ուժեր, որոնք կարող են մտնել Ղարաբաղ՝ հակառակորդ կողմերին խաղաղացնելու նպատակով: Նա նույնիսկ հայտարարեց, թե մտադիր է օգնություն խնդրել ՄԱԿ-ից: Լևոն Տեր-Պետրոսյանը լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտում

է, որ Արցախում միջազգային ներկայությունը կարևոր է[7]: Նա, պատասխանելով «Իզվեստիա» թերթի թղթակցի հարցին, շեշտել է, որ Ղարաբաղում իրոք պատերազմ է, հակառակ կողմը փորձում է ստիպել Ղարաբաղի բնակիչներին գաղթել Հայաստան: Չորրորդ տարին է, ինչ տարածաշրջանը ամբողջովին շրջապատված է: Մինչդեռ ղարաբաղցիները կամենում են, որ աշխարհը ճանաչի իրենց հիմնահարցի գոյությունը[8]: Այդ օրերին նույնպես Դավոսում գտնվող Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը դեմ արտահայտվեց խաղաղարար ուժերի ներկայությանը Լեռնային Ղարաբաղում: Անկասկած, թե՛ Եվրախորհուրդը և թե՛ ԱՊՀ-ն կարող էին խաղաղարար ուժեր ուղարկել աշխարհատարածք՝ առանց Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համաձայնության ու մասնակցության, սակայն դա չարվեց:

Պրահայի վերոհիշյալ խորհրդակցությունը ԱՊՀ երկրներին, Հայաստանին և Ադրբեջանին ընդունեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության մասնակից պետությունների կազմի մեջ. նրանք պարտավորվեցին կատարել Հելսինկյան գործընթացի բոլոր պարտավորությունները և պատրաստակամություն հայտնեցին իրագործել մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանության գոյություն ունեցող մեխանիզմներն ու արարողակարգերը: Ահա թե ինչու այնուհետև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, անկախ Ադրբեջանի և Հայաստանի կամքից, չէր կարող դիտարկվել որպես նրանց ներքին գործ: Այդ մասին հստակ արտահայտվեց Եվրախորհրդի ներքին գործերի նախարարների խորհրդի՝ Պրահայում անցկացվող նիստի Ռուսաստանի պատվիրակության ղեկավարի տեղակալ Յուրի Դերուբինը: Նա պարզաբանեց, որ Հելսինկյան գործընթացի մասնակից երկրները իրենց քաղաքականության մեջ առաջնորդվում են գլխավոր հրամայական պահանջով. մարդու իրավունքները բարձր են ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքից: Իսկ դա «նշանակում է, որ Եվրախորհրդի բոլոր պետություններն իրավունք ունեն մտահոգություն հայտնելու այս կամ այն երկրում ժողովրդավարության և մարդու իրավունքների կոպիտ խախտման դեպքում, պահանջելու, որ հավաստի տեղեկություններ տրամադրվեն պնդելու, որ կարգավորվի բախումային իրավիճակը, և կիրառվեն մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները»: Ռուսաստանի դիվանագետը հատկապես ընդգծեց, որ հունվարի 30-ից՝ Եվրախորհրդի Հայաստանի և Ադրբեջանի միանալու օրվանից, Ղարաբաղի կոնֆլիկտը դարձավ Հելսինկյան գործընթացի մասնակից երկրների մտահոգության առարկա և նոր չափանիշ ստացավ[9]:

Այսպիսով, ինչպես երևում է բերված փաստերից, Լեռնային Ղարաբաղի հարցը միջազգայնացվել է ո՛չ Ադրբեջանի և ո՛չ էլ Հայաստանի կողմից, այլ

---

[7] Հայաստանի Հանրապետություն, 5.II.1992:

[8] Известия, 1.II.1992.

[9] Հայաստանի Հանրապետություն, 4.II.1992:

օտարների, նախ և առաջ Թուրքիայի ջանքերով: Ինչպես գրել է «Դրոշակը», «Արցախի հարցը միջազգայնացավ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովի մեջ»: Արևմուտքը, հատկապես ԱՄՆ-ն և Թուրքիան, փորձեցին Արցախի հիմնախնդրի հարցը արծարծել ՆԱՏՕ-ում, սակայն չհաջողվեց, որովհետև վերջինս խիստ կողմնակալ էր: Դրանից հետո միայն հարցը տեղափոխվեց ԵԱԽԿ, որտեղ Արցախը հայտարարվեց Ադրբեջանի կազմում, և փորձեցին դիտորդներ ուղարկել այնտեղ, որը բխում էր «ԱՄՆ-ի և Թուրքիայի պարտադրած հակահայ» որոշումից[10]:

1992 թ. փետրվարի 20-ին Մոսկվայում բանակցությունների սեղանի շուրջ նստեցին Ադրբեջանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարներ Հուսեին աղա Սադիխովը և Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ մասնակցող միջնորդ, Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Անդրեյ Կոզիրևի մասնակցությամբ: Մեկ օր անց՝ փետրվարի 21-ին, ԼՂՀ իշխանությունները դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետություններին՝ խնդրելով «Լեռնային Ղարաբաղի իրադարձության հարցը քննարկել ՄԱԿ-ի խաղաղարար ուժերում և Լեռնային Ղարաբաղը հայտարարել աղետի գոտի»: Միևնույն ժամանակ պահանջվում է Ադրբեջանի գործողությունները ԼՂՀ-ի նկատմամբ գնահատել որպես հանցագործություն և պետք է դատապարտվի ամբողջ համաշխարհային ընկերակցության կողմից: Թե՛ այդ դիմումը և թե՛ արտաքին գործերի նախարարների վերոհիշյալ բանակցությունները Արցախին նպաստող շոշափելի հետևանքներ չթողեցին: Փետրվարի 27-28-ին ԵԱՀԿ-ն, քննարկելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված հարցը, շեշտեց սահմանների անձեռնմխելիությունը և ԼՂՀ-ն ճանաչեց Ադրբեջանի տարածքում՝ ինքնավարության իրավունքով: Միաժամանակ արձանագրվեց Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքը և բանակցություններին նրա մասնակցելու անհրաժեշտությունը:

ԵԱՀԿ-ն հաշվի չառավ, որ ԼՂՀ-ն հռչակվել էր այն օրենքով, որ օրենքով հռչակվել էր Ադրբեջանի Հանրապետությունը: Դա լիովին համապատասխանում էր միջազգային օրենքներին: Նույնիսկ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, երբ տեղի էր ունեցել ԼՂՀ անկախության հանրաքվեն, ներկա լինելու համար աշխարհի մի շարք երկրներից եկած 40 անկախ դիտորդներն արձանագրել են, որ ԼՂՀ-ում անկախության հանրաքվեն անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան, և ոչ մի խախտում չի արձանագրվել:

Հելսինկիում 1992 թ. մարտի 24-ին տեղի ունեցավ ԵԱՀԿ արտահերթ հանդիպում. որոշում ընդունվեց ապրիլի կեսերին Մինսկում կազմակերպել խորհրդաժողով շահագրգիռ բոլոր կողմերի մաս- նակցությամբ: Այդ խորհրդաժողովի կազմակերպիչներ ճանաչվեցին Ֆրանսիայի և Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարարությունները, որոնք ընդունեցին «ԼՂՀ պատ-

---

[10] *Դրոշակ, 1992, N 10, էջ 7:*

վիրակության լիարժեք իրավունքների պահպանման անհրաժեշտությունը», չնայած Ադրբեջանը լիովին դեմ էր, որ Մինսկի համաժողովի կազմում լինեն Արցախի անկախության համար պայքարող գործիչները: Ասենք նաև, որ Ադրբեջանի իշխանությունները, ըստ էության, կողմ էին Հայաստանի իշխանությունների դիրքորոշմանը: Ինչո՞ւմն է բանը: Հայտնի է, որ 1992 թ. փետրվարի 28-ին և մարտի 24-ին ԵԱՀԿ համաժողովի որոշումների տակ, որտեղ ասված է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածք է, կա Հայաստանի Հանրապետության ստորագրությունը: Համաձայն այդ փաստաթղթի՝ արցախահայությունը դիտվում է որպես ազգային փոքրամասնություն, որին պետք է տրվի մշակութային ինքնավարություն: Հետևաբար՝ անտեսվում է արցախահայության միջազգային իրավունքի բոլոր նորմերով արտահայտված կամքը: Խորհելու և զարմանալու առիթ է տալիս այն, որ կառավարությունը գնացել էր նման քայլի: Այդ ո՞ր օրենքի հիման վրա. չէ՞ որ արցախահայությունը նման երաշխավորագիր չէր տվել Հայաստանի իշխանություններին: Դա բացահայտ ոտնահարում էր Արցախի միջազգային իրավունքներին: Չէ՞ որ ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի 10 սկզբունքներից Արցախի համար կարևոր են տարածքների ամբողջականության, ինքնորոշման և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները: Այդ հակադիր սկզբունքներից եվրոպական տերությունները այն ժամանակ նախապատվությունը տալիս էին տարածքային ամբողջականությանը: Ցավոք, հիշական պարագլուխները պաշտպանում էին եվրոպական պետությունների այդ տեսակետը, որի վառ ապացույցն է վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրումը[11]:

Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հարցում հստակություն չկար, թեև միջազգային հանրությունը անհանգստացած էր ԼՂՀ-ծանր վիճակի համար: Ըստ էության, Ղարաբաղյան հիմնախնդրի միջազգայնացման հարցին ընթացք տալը հասունացել էր. նախընտրելին բանակցային գործընթացով լուծումն էր: Սակայն Ադրբեջանը բոլոր ջանքերը գործադրում էր հարցը լուծել ռազմական ուժով: 1992 թ. մարտի առաջին կեսին հույս կար, որ ԱՊՀ-ն գործուն աջակցություն կունենա Արցախի հիմնահարցը լուծելու համար: ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Մ. Մամեդովը, դիմելով Բ. Ելցինին և Ն. Նազարբաևին, կոչ արեցին բանակցություններ սկսել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ[12]: 1992 թ. մարտյան այդ օրերին տարածաշրջան այցելեց ՄԱԿ-ի պատվիրակությունը՝ Սայրուս Վենսի գլխավորությամբ, որի նպատակն էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի համար ստույգ տեղեկություններ պատրաստել տարածաշրջանի վերաբերյալ: Մարտի 20-ին այդ պատվիրակությունը Ադդամով Ստեփանակերտ ժամանեց ու հանդիպեց ԼՂՀ նախագահ Արթուր Մկրտչյանին և քննարկեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող որոշ հարցեր:

---

[11] Երկիր, 8.V.1992:

[12] Голос Армении, 6.III.1992.

Միջազգային ատյաններում Արցախի հիմնահարցի քննարկումների ժամանակ ՀՀ իշխանությունները հետաքրքրություն չէին ցուցաբերում: Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը պնդում էր, թե «բանակցություններում Հայաստանը չպետք է հանդես գա որպես ակտիվ կողմ, որովհետև նա կարող է միայն այս կամ այն կերպ նպաստել ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործմանը և համաձայն է հարցի ցանկացած լուծմանը, որը կբավարարի Լեռնային Ղարաբաղի բնակչությանը»[13]: Սա ակնհայտ երկերեսանություն էր, անսկզբունքայնություն: Նախագահի այդ ամոթալի դիրքորոշումը ենթակա է ավելի սուր քննադատության: Արժե հիշել հետևյալը. ԼՂՀ նախագահ Արթուր Մկրտչյանը, պատասխանելով լրագրողի հարցին, նշել է, որ ԼՂ հիմնահարցը միջազգայնացնելու համար ոչ ոք չի հարցրել ԼՂ Հանրապետության կարծիքը, դիմել են միայն Հայաստանին և Ադրբեջանին: Մինչդեռ, ըստ Արթուր Մկրտչյանի, Հայաստանը կարող էր «ձիու քայլ կատարել» և առաջարկել Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի միջև բախումը կարգավորելու իր միջնորդությունը, որը չարեց[14]:

ՀՀ արտաքին գործերի նախարար Ռ. Հովհաննիսյանը, այդ օրերին հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ «Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման առաջին քայլերը կլինեն հետևյալը. միջազգային հանրությունը կամ ԼՂՀ-ն կընդունի իբրև առանձին պետություն, կամ ուղղակի բանակցություններ կվարի նրա հետ՝ իբրև լիիրավ գործակից»[15]:

Ստեղծված ոչ բարենպաստ պայմաններում հնարավոր չեղավ հրավիրել Մինսկի խորհրդաժողով, որի նախապատրաստվելու հանձնարարությունը տրված էր ԵԱՀԿ-ում Իտալիայի ներկայացուցիչ, պրոֆեսոր Մարիո Ռաֆայելիին: Ասենք, որ Մինսկի խորհրդաժողովի առաջին 5 նիստերը հրավիրվել են Հռոմում, որոնցից միայն վերջին երեքին են մասնակցել ԼՂՀ ներկայացուցիչները: Մինսկի խումբը, ասել է թե դարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորման բանակցություններ վարող Մինսկի համաժողովի անդամ երկրները, սկսել է գործել 1992 թ. ամառվանից: Համաժողովի ստեղծման մասին որևէ որոշում չի ընդունվել: Մինսկի խմբի անդամ պետություններն են՝ Ադրբեջանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Բելառուս, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ֆրանսիա, Չեխոսլովակիա և Շվեդիա:

Արժե հիշել, որ Արցախի հիմնախնդրի լուծման ուղղությամբ որոշ քայլեր է ձեռնարկել նաև Իրանը, որը տարածաշրջան ուղարկեց պատվիրակություն՝ արտաքին գործերի նախարար Մ. Վայեզիի գլխավորությամբ: Իրանական պատվիրակության նպատակն էր բարձրագույն քաղաքական հանդիպում կազմակերպել Հայաստանի, Ադրբեջանի, ԼՂՀ-ի, Իրանի և Ռուսաստանի մասնակցությամբ: Այդ նախաձեռնության հետևանքն էին 1992 թ. մա-

---

[13] *Հայաստանի Հանրապետություն, 19.II.1992:*

[14] *Ազգ, 18.III.1992:*

[15] *Ազդակ, էջ 102:*

յիսի 6-8-ը Թեհրանում նշված պետությունների մասնակցությամբ բանակցությունը, որը ձախողվեց Շուշիի ազատագրման գործողության հետևանքով:

Ի վերջո, 1992 թ. հունիսի 1-ին Հռոմում սկսվեց Մինսկի հանձնաժողովի 11 պետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը, որտեղ որոշում ընդունվեց Մինսկի համաժողովն անցկացնել հունիսի 23-ին: Սակայն Լեռնային Ղարաբաղը հրաժարվեց մասնակցել համաժողովին, քանի որ պետք էր մասնակցեր դիտորդի կարգավիճակով: Դրանից խիստ մտահոգ էր Լևոն Տեր-Պետրոսյանը. ԼՂՀ-ի դիրքորոշումը պաշտպանելու փոխարեն նա խիստ քննադատության ենթարկեց Արցախի Հանրապետության ղեկավարությանը և պահանջեց պատվիրակություն ուղարկել Հռոմ: Ակնհայտ է, որ մինչ այդ ԼՂՀ ԳԽ նախագահությունը Մինսկի համաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիին ուղարկած դիմումում բացատրել էր ԼՂՀ-ի պատվիրակության՝ Հռոմ չմեկնելու պատճառները: Հռոմ մեկնելու հարցը վեց ժամ քննարկվելուց հետո ԼՂՀ ԳԽ-ն որոշում կայացրեց ձեռնպահ մնալ Հռոմի նախնական խորհրդակցության աշխատանքներին մասնակցելուց[16]: ԼՂՀ իշխանությունը Հայաստանի իշխանությունների նման դիրքորոշման պայմաններում ուրիշ ելք չուներ, քան կատարել ՀՀ ղեկավարության պահանջը: Լ. Տեր-Պետրոսյանը, խուսափելով պատասխանատվությունից, 1992 թ. ամռանը ԼՂՀ կրած անհաջողությունները պատճառաբանեց ԼՂՀ ղեկավարության Հռոմ չգնալով:

Այսպիսով, ԼՂՀ հիմնախնդրի միջազգայնացումն ըստ էության կախված էր որոշ պետությունների ցանկություններից, որը, մեր կարծիքով, իրատեսական չէ:

К ВОПРОСУ ОБ ИНТЕРНАЛИЗАЦИИ АРЦАХСКОЙ ПРОБЛЕМЫ

АБРААМЯН Г. Б.

Резюме

С 1988 г. был поднят вопрос о предоставлении независимости Нагорному Карабаху, Южной Осетии, Абхазии, Косово и т. д. Однако среди перечисленных был интернализован лишь Арцахский вопрос, который по сей день остается нерешенным. Какие же силы были заинтересованы в этом и какую цель они преследовали? В сущности, ни Республика Армения, ни Республика Азербайджан не были заинтересованы в этом.

Арцахский вопрос является эпицентром политических интересов США и Турции. Намеченная на 23-е июня 1992 г. конференция по политическому

[16] *Արցախ, 1.VII.1992:*

урегулированию Карабахского конфликта так и не состоялась. За прошедший период попытки созвать конференцию не увенчались успехом.

THE ISSUE ON THE INTERNATIONALIZATION OF ARTSAKH PROBLEM

H. ABRAHAMYAN

Abstract

Since 1988, the issue on the independence of Karabakh, South Ossetia, Abkhazia, Kosovo and other territories has been raised. However, it was only Artsakh issue that was internationalized and has not been solved yet. Who was interested in it and what was their aim? In fact, it was neither Armenia or Azarbaijan.

Artsakh issue in the spotlight of the USA and Turkish policy. The conference for regulating this conflict did not take place on 23 June, in 1999. In this period, the attempts to organise another conference were futile.